

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ ՍՄԿԿ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ ՄԻԽԱՅԻԼ ՍԵՐԳԵԵՎԻՉ ԳՈՐԲԱՉՈՎԻՆ՝ ՍՍՀՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ԸՆՏՐՎԵԼՈՒ ԱՌԹԻՎ

ՍՄԿԿ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ, ՍՍՀՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ՄԻԽԱՅԻԼ ՍԵՐԳԵԵՎԻՉ ԳՈՐԲԱՉՈՎԻՆ

Մոսկվա, Կրեմլ

Հանուն Հայ Եկեղեցու հավատացյալների ի Սովետական Հայաստան և արտասահման, ուրախ սրտով շնորհավորում ենք Ձեր ընտրությունը իբրև նախագահ Սովետական Միության Գերագույն սովետի: Ցանկանում ենք Ձեզ չնվազող եռանդ ու ոգեշնչում, որպեսզի բարձր հեղինակությամբ շարունակեք Ձեր պատմական առաքելությունը՝ մեր մեծ երկիրը առաջնորդելու ընկերային և բարոյական վերակառուցման ճանապարհով՝ ի մխիթարություն սովետական բազմազգ ընտանիքի:

Մնում ենք աղոթող, որ սովետական ժողովուրդների եղբայրությունը մնա միշտ անսասան և հարաճուն վերելքի մեջ համերաշխ ու շինարար գործակցության ճանապարհով, միշտ կանգնած պաշտպան աշխարհի խաղաղության սրբազան դատին, Ձեր առաջնորդությամբ:

ՎԱԶԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
10 հոկտեմբերի 1988 թ.